

Հավելված N1
 Հայաստանի Հանրապետության
 պետական եկամուտների կոմիտեի նախագահի
 2020 թվականի ապրիլի 17-ի
 N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 26-07-2020 թ. որոշմամբ
 «ՕԳՆԻՐ ԵՂԲՈՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՕԳՆԻՐ ԵՂԲՈՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ Եղբայրության փող. 24 բն. 8	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.768297	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2013-05-18	
1.5 ՀՎՀՀ-ն	02256669	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)98100880	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	rpogosyan1987@bk.ru	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Թաթուլ Հարությունյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Տանիք	565006706
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Տանիք	559490822	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	568485364	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	559490822	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 5 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը



Լիցենզիա ԱՕ 102
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

License ԱՕ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Օգնիր եղբորդ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Օգնիր եղբորդ» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքիև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միջտկհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտի նվերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

26 հունիսի, 2020թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
		-	-
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	4	629,882	928,130
Այլ դեբիտորական պարտքեր	5	516,906	432,687
Դրամական միջոցներ	6	5,120	8,540
		1,151,908	1,369,357
Ընդամենը ակտիվներ		1,151,908	1,369,357
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)		257,440	(45,959)
		257,440	(45,959)
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ և վարկ	7	69,850	57,850
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	750,335	1,347,071
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	10,395	10,395
Շահութահարկի գծով պարտավորություն		63,888	-
		894,468	1,415,316
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,151,908	1,369,357

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 26-ին՝

Տնօրեն
Թաթուլ Հարությունյան



Գլխ. հաշվապահ
Ռոման Պողոսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ		895,651	-
Ինքնարժեք		(518,822)	-
Համախառն շահույթ		376,829	-
Շնորհից եկամուտներ		-	-
Իրացման ծախսեր		-	-
Վարչական ծախսեր	10	(9,006)	(8,110)
Այլ ծախսեր		(550)	(159)
Գործառնական գործունեությունից վնաս		367,273	(8,269)
Ֆինանսական եկամուտ		14	51
Այլ ֆինանսական արդյունքներ		-	10
Շահույթը/(վնաս) մինչև հարկերը		367,287	(8,208)
Շահութահարկի գծով փոխհատուցում		(63,888)	-
Տարվա վնաս		303,399	(8,208)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>		-	-
<i>Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		303,399	(8,208)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա վնաս	303,399	(8,208)
<i>Ճշգրտումներ`</i>		
Շահութահարկի գծով ծախս/ փոխհատուցում	63,888	-
Հիմնական միջոցների մաշվածություն	-	-
Շնորհներից եկամուտ	-	-
Տոկոսային եկամուտ	(14)	(51)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	-	(10)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	367,273	(8,269)
Այլ դերիտորական պարտքերի փոփոխություն	(84,219)	(126,767)
Պաշարների փոփոխություն	298,248	(227,510)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(596,736)	367,132
Գործառնական գործունեությունից օգտագործված դրամական միջոցներ	(15,434)	4,586
Վճարված տոկոսներ	14	51
Վճարված շահութահարկ	-	-
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված / ստացած զուտ դրամական միջոցներ</i>	(15,420)	4,637
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցի ձեռքբերում	-	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	-	-
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Փոխառություններից մուտքեր, զուտ	12,000	-
Եկամուտներին վերաբերող շնորհներից մուտքեր	-	-
<i>Ֆինանսական գործունեության համար օգտագործված/ստացած զուտ դրամական միջոցներ</i>	12,000	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	(3,420)	4,637
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	10
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	8,540	3,893
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	5,120	8,540

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: